ՊԱՏԵՐԱԶՄ ՀԱՅՏԱՐԱՐԵՔ ԹՇՆԱՄԻՆԵՐԻՆ: ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(Առաջին ռազմավարություն)

Պատերազմը և նրա վարման ձևերն ունեն անկոտրում, անողոք տրամաբանություն: Եթե ինչ-որ բան եք ուզում, կամ ինչ-որ բանի եք ձգտում, ապա պետք է պատրաստ լինեք պայքարել դրա համար:

Պատերազմի ռազմավարական արվեստին տիրապետելը կյանքը կդարձնի ավելի հանգիստ, խաղաղ և արդյունավետ, քանզի դուք կիմանաք, թե որոնք են խաղի կանոնները և կկարողանաք հաղթանակներ տոնել:

Պատերազմների ընթացքում, ինչպես ցանկացած այլ հակամարտություններում, հաղթանակների են հասնում ռազմավարական արվեստի շնորհիվ:

ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄԻ

Մ.թ.ա. 401-ի գարնանը Քսենոփոնը՝ երեսնամյա հարուստ հույն, ով ապրում էր Աթենքի մերձակայքում գտնվող իր կալվածքում, հրավեր ստացավ մի ընկերոջից, ով հավաքագրում էր հույն մարտիկներին, որպես վարձկաններ պատերազմելու պարսից արքա Կյուրոսի՝ Արտաքսերքսեսի եղբոր բանակում: Արշավին մասնակցելու առաջարկը մի փոքր անսովոր էր, քանի որ հույներն ու պարսիկները թշնամիներ էին անհիշելի ժամանակներից, և նկարագրված իրադարձություններից ութսուն տարի առաջ Աքեմենյան Պարսկաստանը արդեն փորձել էր նվաճել Հունաստանը: Բայց այդ օրերին, փառավորված հույն մարտիկները, սկսեցին իրենց ծառայություններն առաջարկել նրան, ով ավելի շատ կվճարեր, իսկ պարսկական կայսրությունում կային ապստամբ քաղաքներ, որոնք Կյուրոսը պատրաստվում էր պատժել: Հույն վարձկանները կարող էին հիանալի ուժեղացում հանդիսանալ նրա տպավորիչ բանակի համար:

Քսենոֆոնը ամենևին էլ մարտերում կոփված զինվորական չէր: Նա, ըստ էության, համարվում էր փափկասուն մարդ և սիբարիտ[1] ով վարում էր համապատասխան կյանք՝ սիրում էր շներ ու ձիեր, երբեմն վազում էր Աթենք, որտեղ փիլիսոփայական զրույցներ էր վարում իր լավ ընկեր Սոկրատեսի հետ և կամաց-կամաց այրում էր իր ժառանգությունը: Այնուամենայնիվ, նա ուզում էր նորություն, արկածախնդրություն, և հետո հանկարծ հնարավորություն ունենալով հանդիպել Մեծն Կյուրոսին, առաջին ձեռքից պարզել, թե ինչ է պատերազմը, և ավելին՝ տեսնել Աքեմենյան Պարսկաստանը: Քսենոֆոնը որոշեց, որ կարող է պատերազմ գնալ ոչ թե որպես վարձկան (նա այնքան հարուստ էր, որ փողի մասին չէր մտածում), այլ որպես փիլիսոփա և պատմաբան: Միգուցե, երբ ամեն ինչ ավարտվեր, նա կկարողանար գիրք գրել վերապրածի մասին: Դելփյան օրակուլներից[2] խորհուրդ խնդրելով՝ նա ընդունեց առաջարկը:

Կիրոսի պատժիչ արշավախմբին միացավ մոտ 13 հազար զինվոր: Վարձկանները ամբողջ Հունաստանից հավաքված խայտաբղետ ամբոխ էր, ովքեր միացել էին նրան փողի և արկածներ փնտրելու խնդրով: Սկզբում ամեն ինչ լավ էր ընթանում, բայց մի քանի ամիս անց, երբ բանակն արդեն խորացավ Պարսկաստանի տարածքում, բացահայտվեց Կյուրոսի իրական նպատակը՝ նրանք շարժվում են Բաբելոն քաղաքացիական պատերազմ սանձազերծելու համար: Կյուրոսը մտադիր էր տապալել եղբորը և զավթել թագավորական գահը: Խաբված հույները սկսեցին զայրանալ, բայց Կյուրոսը խոստացավ մեծահոգաբար վճարել, և նրա խոստումները հանդարտեցին դժգոհներին:

---

[1] **Սիբարիտ՝** նրբաճաշակ վայելքների սիրահար, նրբակենցաղ մարդ:
https://hy.wiktionary.org/wiki/սիբարիտ

[2] **Օրակուլ** (լատին. ՝ oraculum, «ասում եմ, խնդրում եմ»), անտիկ շրջանում մարգարեության տարածված ձև, որի դեպքում հավատացյալը դիմում է աստվածներից գուշակություն ստանալու համար, որը փոխանցվում է հավատացյալին քրմի միջոցով, որն էլ հենց կոչվում էր օրակուլ(գուշակ): Ավելի լայն իմաստով օրակուլ ասելով հասկանում էին այն տեղը, որտեղ հայտնում էին գուշակությունը և գուշակության տեքստը: Ժամանակակից լեզվում օրակուլ ասելով հասկանում ենք ապագայի գուշակ, ինչպես նաև մարդ, ում դատողությունները ընդունվում էին որպես անբեկանելի ճշմարտություն, հայտնություն: https://hy.wikipedia.org/wiki/Օրակուլ

Կյուրոսի և Արտաքսերքսեսի բանակները հանդիպեցին Բաբելոնից ոչ հեռու գտնվող Կունաքս գյուղի մոտ: Կյուրոսը սպանվեց ճակատամարտի հենց սկզբում, և նրա մահը վերջ դրեց նոր սկսված պատերազմին, բայց հույները հանկարծ հայտնվեցին շատ անկայուն վիճակում. նրանք աջակցում էին պարտված կողմին և այժմ հեռու էին տնից՝ շրջապատված թշնամաբար տրամադրված պարսիկներով: Այդուհանդերձ, նրանց տեղեկացրեցին, որ Արտաքսերքսեսը չի պատրաստվում վիճել իրենց հետ և ցանկանում է միայն, որ նրանք շուտափույթ հեռանան: Բացի այդ, Արտաքսերքսեսը վարձկաններին մատակարարելու կարգադրությամբ և նրանց մինչև Պարսկաստանի սահմանները ուղեկցելու նպատակով նույնիսկ ուղարկեց լիազոր ներկայացուցիչ հանձինս պարսկական հրամանատար Թիսաֆերնի: Եվ ահա Թիսաֆերնի առաջնորդությամբ հունական բանակը բռնեց վերադարձի ճանապահը: Սակայն ադ ճանապարհը մոտ չէր՝ ավելի քան մեկուկես հազար մղոն:

Պարսիկների կողմից տրամադրված մթերքը ակնհայտորեն բավարար չէր, այն չէր բավականացնի մինչև ճանապարհի ավարտը, և Թիսաֆերնի առաջարկած երթուղին կասկածներ հարուցեց: Կարելի՞ էր արդյոք ընդհանրապես վստահել պարսիկներին: Վախեցած հույների շրջանում բամբասանքներ սկսվեցին:

Հույն զորավար Կլեարքոսը դիմեց Թիսաֆերնին, ով, բարյացակամորեն լսելով նրան, առաջարկեց, որպեսզի Կլեարքոսն իր հրամանատարների հետ միասին չեզոք տարածքում հանդիպման ներկայանա, որտեղ հույները իրենց պահանջներ կներկայացնեն, և կողմերն անպայման փոխըմբռնման կհասնեն: Կլեարքոսն ընդունեց առաջարկը և հաջորդ օրը նշանակված ժամին հայտնվեց նշված վայրում: Սակայն, այնտեղ հույներին սպասում էին պարսկական ուժերը: Զինվորականներին շրջապատեցին, բռնեցին և նույն օրը գլխատեցին:

Բայց մեկին հաջողվեց փախչել և հաղորդել պարսիկների դավաճանության մասին: Երեկոյան հունական ճամբարում տխուր տեսարան էր: Հուսահատությունը պատել էր բոլորին: Ոմանք հայհոյում և մեղադրում էին բոլորին անընդմեջ, մյուսները զբաղված էին հարբեցողությամբ: Ոմանք խոսում էին փախուստի մասին, բայց նրանք էլ, հիշելով հրամանատարների ճակատագիրը, իրենց դատապարտված էին զգում:

Այդ գիշեր Քսենոփոնը, ով մինչ այդ զուսպ էր, երազ տեսավ՝ իրբրև թե Զևսի ուղարկված կայծակից հայրական տունը հրդեհվել է: Քսենոֆոնը սառը քրտինքի մեջ արթնալով հանկարծ մի միտքի հանգեց, որ մահը նայում է հույների դեմքին, մինչդեռ նրանք անպատշաճ վիճակում պառկած էին, հառաչում, հայհոյում ու ոչինչ չէին անում: Բայց ամեն ինչի մեղավորը հենց իրենք են: Չէ՞ որ նրանք էին փող վաստակելու համար մեկնել պատերազմի, այլ ոչ թե սեփական հողի կամ գաղափարի համար էին մարտնչում, չէին տարբերում թշնամիներին ընկերներից և այդ պատճառով լրիվ շփոթված են: Նրանց և տան միջև ընկած էին ոչ թե սարեր ու ձորեր, ոչ էլ նույնիսկ պարսկական բանակը, այլ մեկ այլ խոչընդոտ՝ խառնաշփոթը իրենց գլխում: Քսենոփոնն ատում էր հենց այդպիսի ամոթալի մահվան միտքը: Զուտ քաղաքացիական մարդ, պատերազմից հեռու, նրան, սակայն, խորթ չէր փիլիսոփայությունը և հասկանում էր, թե ինչպես են մարդիկ մտածում և տրամաբանում: Նա հավատում էր, որ եթե հույները մտածեն թշնամիների մասին, ովքեր մտադիր էին անխնա կոտորել նրանց, նրանք կկարողանան իրենց հավաքել և անպայման կհասկանան, թե ինչպես դուրս գալ անելանելի վիճակից: Պարզապես անհրաժեշտ էր կենտրոնանալ պարսիկների ստոր դավաճանության վրա, զայրանալ, հուզվել, և նրանց զայրույթը կօգներ հաղթելուն: Այսուհետ նրանք պարզապես շփոթված վարձկաններ չէին հանդիսանա: Նրանք հույներ են՝ անազնիվ պարսիկների լրիվ հակառակը:

Պարզապես հարկավոր էր մարդկանց հստակ բացատրել դա և ուղղորդել նրանց ճիշտ ուղղությամբ:

Քսենոֆոնը որոշեց դառնալ Զևսի կայծակը, որը կարթնացներ մարդկանց և կլուսավորեր նրանց ճանապարհը: Նա կանչեց ողջ մնացած հրամանատարներին և ներկայացրեց իր ծրագիրը՝ պարսիկներին անողոք պատերազմ հայտարարել՝ առանց նրանց հետ բանակցելու երկմտանքի: «Այլևս դատարկ դատողությունների վրա չի կարելի ժամանակ կորցնել, բավական է ամեն ինչում ինքներս մեզ մեղադրենք», - ասում էր Քսենոֆոնը: «Այսուհետ մեր բոլոր ուժերը ուղղելու ենք պարսիկների դեմ: Մենք կդառնանք հնարամիտ և ոգեշնչված, ինչպես Մարաթոնի ճակատամարտում մարտնչած մեր նախնիները, - չէ որ նրանց հաջողվեց, ոչ որպես օրինակ, ջախջախել ավելի ահեղ պարսկական բանակը: Մենք կայրենք սննդի բոլոր գումակները, և կկերակրվենք հողից: Մենք կդառնանք անորսալի և սրընթաց: Մենք ոչ մի պահ զենքը ձեռքից բաց չենք թողնի՝ անընդհատ մտածելով բոլոր կողմերից սպասող վտանգների մասին: Մենք կամ նրանք, կյանքը կամ մահը, բարին կամ չարը, ահա թե ինչ է դա նշանակում մեզ համար: Իսկ եթե ինչ-որ մեկը փորձի մեզ շփոթեցնել զինադադարի մասին ընդարձակ ճառերով կամ այլ աղոտ գաղափարներով, նրանք մեր շարքերում տեղ չունեն՝ դրանք կամ վախկոտներ են, կամ դավաճաններ: Պարսիկներն իրենք են մեղավոր, որ մենք այսուհետ զրկված ենք ամեն խղճահարությունից: Մենք պետք է սնվենք միայն մեկ մտքով՝ տուն վերադառնալ կենդանի» :

Ռազմիկները հասկանում էին, որ Քսենոֆոնը ճիշտ էր: Հաջորդ օրը նրանց մոտ եկավ պարսիկ զորահրամանատարը՝ առաջարկելով որպես միջնորդ հանդես գալ Արտաքսերքսեսի հետ բանակցություններում: Հետևելով Քսենոփոնի խորհրդին՝ հույները հրաժարվեցին խոսել նրա հետ և վտարեցին նրան ճամբարից: Հիմա այլևս կասկած չկար՝ սկսվեց իսկական պատերազմը:

Իրադարձությունների նոր շրջադարձից ոգեշնչված՝ հույներն ընտրեցին հրամանատարներ, որոցից մեկն էր Քսենոֆոնը, և բռնեցին վերադարձի ճանապարհը: Ստիպված ապավինելով սեփական ուժերին՝ նրանք արագ հարմարվեցին տեղի պայմաններին: Երբ անհրաժեշտ էր թաքնվում էին՝ խուսափելով բախումներից, երբ անհրաժեշտ էր գիշերային երթեր էին կատարում: Այս ամենը հնարավորություն ստեղծեց խուսափել պարսիկների ճակատային հարվածից: Վճռական փուլում անցնելով լեռնային կիրճը հույները պարտության մատնեցին նրանց: Եվ չնայած հույները դեռ երկար ճանապարհ ունեին անցնելու թշնամական ցեղերով բնակեցված տարածքներով, դա ոչինչ էր այն բանի համեմատ, որ պարսկական սարսափելի զորքերը շատ էին հետ մնացել: Տուն վերադարձի ճանապարհը տևեց ավելի քան մեկ տարի, բայց գրեթե բոլոր զինվորները ողջ վերադարձան Հունաստան:

Մեկնաբանում

Կյանքը մշտական պայքար է, դուք անընդհատ կարող եք հայտնվել տհաճ փոփոխությունների հորձանուտում, շփոթվել բարդ հարաբերություններում, ստիպված լինել կատարել անբարենպաստ պարտավորություններ: Ձեր ճակատագիրը կախված է նրանից, թե ինչպես եք հաղթահարում բոլոր դժվարությունները, ինչպես եք վարվում կրիտիկական իրավիճակներում: Հիշում եք, թե ինչ ասաց Քսենոֆոնը: Ձեր առջև ծառացած խոչընդոտները սարեր ու ձորեր չեն, կամ այլ մարդիկ չեն, այդ խոչընդոտները՝ դուք եք: Եթե թևաթափ եք եղել, շփոթություն և անզորություն եք զգում, եթե թվում է, թե մոլորվել եք և չգիտեք, թե ուր գնալ, եթե այլևս չեք տարբերում ընկերոջը թշնամուց, ուրեմն ինքներդ եք մեղավոր:

Պատկերացրեք, որ դուք միշտ պատրաստ եք պայքարի: Ամեն ինչ կախված է միայն ձեր մտածելակերպից, այն բանից, թե ինչպես եք նայում կյանքին: Փոխելով ռակուրսը՝ դուք կկարողանաք ինքներդ ձեզ անգործունյա, շփոթված վարձկանից վերածել ոգեղեն, հաղթանակի տրամադրված մարտիկի:

Մեզ դատում են այն բանի հիման վրա, թե ինչպիսին են մեր հարաբերությունները ուրիշների հետ: Մանկության տարիներին մենք աստիճանաբար գիտակցում ենք մեր անհատականությունը՝ առանձնանալով մեզ արտաքին աշխարհից, երբեմն նույնիսկ հասնելով ծայրահեղությունների, երբ ուրիշներին հեռացնում ենք մեզանից, մերժում, ըմբոստանում: Որքան ավելի հստակ ես հասկանում, ինչպիսին ես ցանկանում (կամ չես ցանկանում) լինել, այնքան ավելի հստակ է ուրվագծվում նպատակը, այն իդեալական պատկերը, որին արժե ձգտել ու հասնել: Առանց բևեռականության այս զգացողությունը զգալու, առանց ձեր առջև թշնամի ունենալու, որի դեմ պետք է պայքարել, դուք շփոթված կլինեք, ինչպես պատահեց հույն վարձկանների հետ: Այլ մարդկանց կողմից խաբեության զոհ դառնալուց հետո դուք վճռական պահին կխեղդվեք՝ վատնելով թանկարժեք ժամանակը ողբալու և վիճելու համար:

Կենտրոնացեք թշնամու վրա: Դա կարող է լինել մեկը, ով կկանգնի ձեր ճանապարհին և գաղտնի կամ բացահայտ կխոչընդոտի ձեր ցանկացած ջանքերին: Դա կարող է լինել մեկը, ով վիրավորել է ձեզ կամ անարդարացիորեն կռվել ձեզ հետ: Դա կարող է լինել գաղափար կամ արժեք, որը զզվելի է ձեզ համար, անընդունելի է ձեզ համար, բայց որը կիսում է որոշակի մարդ կամ մարդկանց խումբ: Դա կարող է նույնիսկ աբստրակցիա լինել՝ հիմարություն, ինքնագոհություն, հոգևորության զռեհիկ բացակայություն: Մի լսեք նրանց, ովքեր ասում են, որ պետք է բոլորի հետ ընկերական հարաբերություններ հաստատել, որ թշնամիներին ընկերներից տարբերելը պարզունակ և հնաոճ է: Նրանք պարզապես վախենում են պայքարից և այդ վախը թաքցնում են կեղծ բարեկամության էկրանի հետևում: Նրանք փորձում են ձեզ մոլորեցնել, վարակել իրենց սեփական անորոշությամբ, հասկացությունների անորոշությամբ: Չարին, սակայն, պետք է դիմադրել և անհաշտորեն դիմակայել: Եթե դուք լիովին վստահ եք ինքներդ ձեզ և ունեք հստակ պատկերացում ձեր նպատակների մասին, ապա ձեր սրտում միշտ տեղ կգտնվի իսկական ընկերության և իսկական առատաձեռնության համար: Թշնամին ձեր առաջնորդող աստղն է, որը թույլ չի տալիս մոլորվել: Շարժվելով ճիշտ ուղղությամբ՝ դուք ուժ կգտնեք պայքարելու:

Նա, ով ինձ հետ չէ, իմ դեմ է:
ԱՎԵՏԱՐԱՆ Ղուկասի. 11:23

ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄԻ

1970-ականների սկզբին Բրիտանիայի քաղաքական համակարգը բավականին կայուն և կայացած էր: Հարմար սխեմա էր, երբ ընտրություններում հաղթում էին լեյբորիստական կուսակցության ներկայացուցիչները, հաջորդ անգամ հաղթում էին պահպանողականները: Իշխանությունը մեկից մյուսն էր անցնում քաղաքակիրթ, ջենտլմենական եղանակով: Փաստորեն, կուսակցություններն արդեն սկսել էին նմանվել մեկ ամբողջության երկու մասերի: Բայց երբ պահպանողականները պարտվեցին ընտրություններում 1974 թվականին, նրանցից ոմանք որոշեցին, որ

այսպես շարունակվել չի կարող։ Ցանկանալով փոխել իրերի հերթականությունը՝ նրանք առաջնորդ առաջարկեցին Մարգարեթ Թեթչերին։ Կուսակցությունում չկար միասնություն և Թեթչերը հմտորեն օգտվելով տարաձայնություններից ու պառակտումներից՝ հաղթեց։

Անգլիական հասարակությունը երբեք չէր տեսել Թեթչերի նման քաղաքական գործիչի։ Կինը մի աշխարհում, որտեղ տղամարդիկ էին որոշում ամեն ինչ, արիստոկրատական ավանդական կուսակցությունում նա՝ նպարավաճառի դուստրը, ներկայացնում էր միջին խավը և չէր ամաչում դրա համար։ Նրա հագուստը խիստ էր, ինչպես ուսուցչինը և ավելի շատ սազում էր տնային տնտեսուհուն, քան բարձրաստիճան քաղաքական գործիչին։ Պահպանողական կուսակցությունում Թեթչերը պատկանում էր ծայրահեղ աջ թևին։ Բայց առանձնապես աչքի էր ընկնում նրա ոճը։ Այնտեղ որտեղ քաղաքական գործիչները խոսում էին մեղմ ու հաշտարար, նա հարձակվում էր իր հակառակորդների վրա՝ բացահայտ առճակատման մեջ մտնելով նրանց հետ, կարծես մարտի էր նետվում։

Քաղաքական գործիչների մեծ մասն այս հաղթանակը պատահական էին համարում և կանխատեսում էին, որ Թեթչերը երկար ժամանակ չի մնա իշխանության ղեկին։ Իր ղեկավարության առաջին տարիներին նա ոչինչ չէր ձեռնարկում թերհավատների կասկածները հերքելու համար։ Նա կոշտ քննադատության էր ենթարկում լեյբորիստներին իրենց վարած սոցիալիստական քաղաքականության համար, որն իր կարծիքով, խեղդել էր բոլոր առաջադեմ նախաձեռնությունները և հանգեցրել բրիտանական տնտեսության անկմանը։ Լարվածության լիցքաթափման շրջանում նա քննադատում էր Խորհրդային Միությանը։ Այնուհետև, երբ 1978/79-ի ձմռանը մի շարք պետական հատվածի արհմիություններ գործադուլ սկսեցին, Թեթչերը բացահայտորեն բռնեց պատերազմի ուղին՝ ի լուր աշխարհի մեղադրելով Լեյբորիստական կուսակցությանը և նրա առաջնորդ Ջեյմս Կալագենին այդ իրադարձությունների համար։ Նա հանդես եկավ վճռականորեն և անզիջում, սակայն այդպիսի կտրուկ ելույթները լավ էին երեկոյան լուրերի վերնագրերի համար, բայց ոչ ընտրություններում հաղթելու համար։ Ընտրողների հետ պետք էր ավելի զգույշ լինել՝ ավելի լավ էր հանգստացնել նրանց, այլ ոչ թե վախեցնել։ Համենայնդեպս, այդ էր պահանջում ընդունված ողջամտությունը։

1979 թվականին Լեյբորիստական կուսակցությունը նշանակեց համընդհանուր ընտրություններ։ Թեթչերը շարունակեց իր հարձակումները՝ ընտրությունները անվանելով խաչակրաց արշավանք ընդդեմ սոցիալիզմի և վերջին հնարավորություն բարելավելու իրավիճակը երկրում։ Կալագենը ամբողջ ուժով փորձում էր մնալ պարկեշտության սահմաններում՝ քաղաքական գործիչ դարձած այս տարօրինակ տնային տնտեսուհու նկատմամբ։ Սակայն Թեթչերը չէր հանդարտվում, և նրան այլ բան չէր մնում, քան պատասխան կրակ բացել։ Կալագենը համաձայնեց, որ ընտրությունները շրջադարձային են, քանի որ Թեթչերի հաղթանակի դեպքում երկրին տնտեսական ճգնաժամ է սպասվում։ Մարտավարությունը, թվում էր, մասամբ աշխատեց։ Թեթչերի քայլերը վախեցրեցին ընտրողներին, հարցումները ցույց տվեցին, որ նա ժողովրդականությամբ հետ է մնում Կալագենից։ Միևնույն ժամանակ, սակայն, նրա հռետորաբանությունը և լեյբորիստների առաջնորդի արձագանքները հանգեցրին ընտրազանգվածի բևեռացմանը։ Որոշ ժամանակ անց ընտրողները զգացին, որ ակնհայտ տարբերություն կա կուսակցությունների միջև։ Երկրի բնակչությանը բաժանելով ձախերի և աջերի Թեթչերը շտապեց բեկում մտցնել՝ ուշա-

դրությունը հրավիրելով իր վրա և իր կողմը գրավելով տատանվողներին: Նա զգալի առավելությամբ հաղթեց ընտրություններում:

Թետչերը ապշեցրեց ընտրողներին, բայց հիմա, դառնալով վարչապետ, հարկ էր մեղմացնել տոնը, սփոփել, զբաղվել վերքերի ապաքինմամբ, համենայնդեպս, ըստ հարցումների, հենց դա էր նրանից ակնկալում ազգը: Սակայն Թետչերը կրկին ճիշտ հակառակն արեց՝ բյուջեն կրճատեց առավել խիստ, քան առաջարկում էր նախընտրական արշավի ժամանակ: Կալագենի կանխատեսած ճգնաժամը բռնկվեց տնտեսության մեջ, գործազրկությունն աճեց: Իր իսկ կուսակցության անդամները, որոնցից շատերը նախկինում քննադատում էին նրա տեսակետները, այժմ բացահայտորեն բարձրացնում էին առաջնորդի իրավասության հարցը: Թետչերը երկիրը տանում էր դեպի տնտեսական աղետի, և նրանք արդարացիորեն վախենում էին, որ ստիպված են լինելու վճարել իրենց կարիերայով կատարած սխալների համար: Թետչերի արձագանքը կտրուկ էր: Նա ազատվեց իր կաբինետում գտնվող հակառակորդներից: Նրա թշնամիների բանակն անընդհատ աճում էր: Կասկած չկար, որ հաջորդ ընտրություններում նրան մոտալուտ պարտություն է սպասվում:

Բայց եկավ 1982 թվականը: Արգենտինայի ռազմական վարչակազմը, հուսահատ կարիք ունենալով գնալ ցանկացած իրադարձության, որը կհամախմբեր ազգը և կշեղեր ուշադրությունը երկիրը պատուհասած բազմաթիվ խնդիրներից, գրավեց Ֆոլքլենդյան կղզիները: Պատմականորեն այդ տարածքները պատկանում էին Բրիտանիային, սակայն Արգենտինան բազմիցս հայտնել է իր հավակնությունները կղզիների նկատմամբ: Արգենտինական հրամանատարությունը համոզված էր, որ Բրիտանիան կլքի հեռավոր, անպտուղ, անօգուտ Ֆոլկլենդները: Բայց Թեթչերը չվարանեց: Չնայած հեռավորությանը՝ ութ հազար մղոն, նա ռազմածովային օպերատիվ միավորումներ ուղարկեց կղզիներ: Լեյբորիստների առաջնորդները քննադատեցին վարչապետին թանկարժեք և անիմաստ պատերազմի մեջ ներգրավվելու համար: Թեթչերի համակուսակիցներից շատերը սարսափում էին, որ եթե Ֆոլկլենդները հետ գրավման փորձը ձախողվի, ապա կուսակցությունը դատապարտված կլինի պարտության: Թեթչերը միայնակ էր, ինչպես երբեք: Սակայն նրա որակները, որոնք նախկինում առաջացրել էին գրգռվածություն, հասարակության կողմից այլ կերպ սկսվեց ընկալվել: Թետչերը հայտնվեց նոր լույսի ներքո. նրա անզիջողականությունն այժմ գնահատվում էր որպես համառություն, քաջություն, ազնվականություն: Իր շրջապատի տղամարդկանց՝ փափկասուն կարիերիստների համեմատ, նա վճռական և ինքնավստահի տպավորություն էր թողնում:

Արդյունքում Բրիտանիան վերանվաճեց Ֆոլքլենդյան կղզիները, և Թեթչերի ժողովրդականությունը անհավատալիորեն աճեց: Հանկարծակի թե՛ տնտեսության, թե՛ սոցիալական ոլորտներում առաջացած խնդիրները հետին պլան մղվեցին: Թեթչերն այժմ բոլորից վեր էր, և հաջորդ երկու ընտրություններում նա ջախջախեց լեյբորիստներին:

Մեկնաբանում

Նույնիսկ իշխանության գալով՝ Մարգարեթ Թետչերը շարունակում էր մնալ հասարակության լայն շերտերի վստահությունը չվայելող քաղաքական գործիչ (outsaider) կին, ով միջին խավի ներկայացուցիչ էր, այն էլ արմատական, ծայրահեղ աջ հայացքներով: Իշխանության հասած ցանկացած outsaider-ի առաջին բնազդային շարժումը ճանաչում ձեռք բերելն է, յուրային դառնալը: Սա հեշտացնում է կյանքը, բայց միևնույն ժամանակ մյուսներից տարբերվելու համար իր անհատականությունը

կորցնելու ռիսկի է ենթարկվում: Եթե Թետչերը ընդօրինակեր իրեն շրջապատող տղամարդկանց, առաջին իսկ հնարավորության դեպքում նրան պարզապես կփոխարինեին մեկ այլ, ճիշտ նույն քաղաքական գործիչով: Բնազդը նրան այլ լուծում էր հուշում՝ պահպանել իր այլախոհությունը, մնալ «օտար»: Ըստ էության, նա տեղում կանգնած չէր և որպես outsaider շատ առաջ էր անցել՝ խաղարկելով միակ կնոջ խաղաքարտը, որը դեմ է տղամարդկանց բանակին:

Իր ճանապարհի յուրաքանչյուր փուլում Թետչերը գտնում էր իր համար այնպիսի հակառակորդի, որն ավելի լավ կընդգծեր հակադրությունը. կա՛մ դա սոցիալիստներն էին, կա՛մ իր կաբինետի գործընկերները, կա՛մ Արգենտինայի կառավարությունը: Այս հակառակորդները օգնեցին նրան ստեղծել իր սեփական կերպարը՝ ճանապարհին կատարելագործելով իր վճռական, հզոր, անձնուրաց քաղաքական գործչի կերպարը: Թետչերին չէր կուրացրել մակերեսային, վաղանցիկ ժողովրդականությունը: Փորձագետները կարող էին խոսել ժողովրդականության ցուցանիշների մասին, ինչ ցանկանում էին, բայց ընտրողների համար, ովքեր քաղաքական գործիչներին թույլ են տալիս հաղթել մարտերում, հրամայական, վճռական տեսքը լուրջ առավելություն է անորոշության և անտարբերության համեմատ: Եվ կարևոր չէ, որ հասարակության մեջ ինչ-որ մեկը ձեզ դուր չի գալիս. թույլ տվեք, որովհետև անհնար է բոլորին գոհացնել: Ինչպես նաև ամբողջ ուժով մի փորձեք ճանապարհ հարթել կենտրոն, որտեղ բոլորն արդեն հավաքվել են: Կենտրոնում արդեն ամբոխն է և տեղ գրավելու համար պետք է պայքարել: Առանձնացրեք ձեր շուրջը գտնվողներին և վերացրեք նրանցից ոմանց՝ պայքարի համար տարածք ազատելու համար:

Այսպիսին է ստեղծված այս աշխարհը, կարծես քեզ միտումնավոր փորձում են են քշել կենտրոն, մեջտեղ, և ոչ միայն քաղաքականության մեջ: Չէ որ միջինն այն ոլորտն է, որտեղ տիրում է փոխզիջումը: Ուրիշների հետ լեզու գտնելու ունակությունը կարևոր է և անհրաժեշտ, բայց երբեմն դա հղի է վտանգներով: Անընդհատ հավատարիմ մնալով նվազագույն դիմադրության գծին, հաշտեցման որոշումներին, դուք ռիսկի եք դիմում մոռանալ ձեր անհատականության մասին, ինչը վերջում կհանգեցնի աղոտ միջակության մեջ ձուլվելուն: Փոխարենը, ինքներդ ձեզ զգացեք որպես մարտիկ, որպես թշնամու կողմից շրջապատման մեջ գտնվող օտարի: Միշտ պատրաստ լինելով մարտի, դուք կարող եք պահպանել ձեր ուժերն և չկորցնել զգոնությունը: Սա կօգնի ձեզ հստակ գիտակցել, թե ինչին եք հավատում և ինչն եք կարևոր համարում ինչպես ձեր, այնպես էլ ուրիշների համար: Մի անհանգստացեք նրանց համար, ովքեր փայտեր են դնում ձեր անիվների արանքում: Առանց դիմակայության պայքար չկա, իսկ առանց պայքարի անհնար է նաև հաղթանակը: Դիմադրեք բոլորին դուր գալու ցանկությանը, դա դեռ անհասանելի է: Ավելի լավ է, որ ձեզ հարգեն և նույնիսկ վախենան: Ձեր հակառակորդներին հաղթելը ձեզ ավելի ամուր ժողովրդականություն կբերի:

Պատերազմ վարելու կանոնն այն է, որ ոչ թե ապավինես նրան, որ հակառակորդը չի գալու, այլ ապավինես նրան, ինչով կարող ես նրան դիմավորել:

Սուն Ցզի

«Տրակտատ ռազմական արվեստի մասին»

(մ. թ. ա. IV դար)

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐ

Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մարդիկ հազվադեպ են ուղղակի, բացահայտ թշնամանք ցուցաբերում: Փոխվել են հարաբերությունների նորմերը՝ սոցիալական, քաղաքական, ռազմական, համապատասխանաբար փոխվել են նաև հակառակորդի մասին մեր պատկերացումները: Այժմ հազվադեպ ենք հանդիպում բացահայտ թշնամու, և փառք Աստծո: Մեր օրերերում նրանք դժվար թե բացահայտ հարձակվեն ձեզ վրա չթաքցնելով իրենց մտադրությունները՝ ձեզ ոչնչացնելու ցանկությունը: թշնամիներն այժմ չեն բացահայտում իրենց, նրանք խուսափողական են և անորսալի: Չնայած ժամանակակից աշխարհում մրցակցությունն ավելի շատ է, քան երբևէ, բացահայտ ագրեսիան չի խրախուսվում: Ուստի մարդիկ սովորել են անուղղակի ճանապարհներով գնալ, հարձակվել հանկարծակի, գաղտագողի կերպով: Պատահում է, որ ընկերությունն օգտագործվում է որպես թշնամական մտադրությունները քողարկելու գործիք: Նրանք փորձում են մոտենալ քեզ, որպեսզի ուժեղ հարվածեն: (Ընկերը բոլորից լավ գիտի, թե ինչպես ցավ պատճռելլ) Այլ դեպքերում ձեզ կարող են առաջարկել, թեկուզ ոչ սերտ ընկերություն, բայց աջակցեն: նման Այսպիսի մարդիկ կարծես հուսալի են, պատրաստ են օգնել, բայց, ի վերջո, նրանք առաջ են մղում իրենց շահերը՝ ի վնաս ձեզ: Կան ուրիշները, ովքեր բարոյական պատերազմի վարպետներ են: Սրանք իրենց կպատկերեն զոհի կարգավիճակում և կստիպեն ձեզ զգալ մեղքի բարդույթ, կստիպեն ձեզ երդվել ինչ-որ անորոշ բանի համար, մի բան, որը դուք չեք արել: Ռազմի դաշտում շատ են այդպիսի մարտիկները՝ խորամանկ, նենգ, անորսալի:

Ահա թե ինչն է կարևոր գիտակցել. անգլերեն enemy (թշնամի) բառը ծագում է լատիներենից inimicus (ոսոխ, թշնամի): «Թշնամի» բառը ժամանակի ընթացքում ծայրահեղության աստիճանի քաղաքականացվել է և գրեթե դիվային երանգ է ստացել: Որպես ստրատեգ ձեր առաջին խնդիրն է ընդլայնել «թշնամի» բառի ձեր ընկալումը՝ այս հասկացության մեջ ներառելով բոլոր նրանց, ովքեր գործում են ձեր դեմ, խանգարում են ձեզ, նույնիսկ աննկատելիորեն: (Երբեմն անտարբերությունն ու անգործությունը ծառայում են որպես ավելի արդյունավետ զենք, քան ագրեսիվությունը, որովհետև չես կարող նկատել թշնամանքը, որը թաքնված է դրանց հետևում): Չընկնելով հետապնդման մոլուցքի մեջ, դուք պետք է գիտակցեք, որ աշխարհում կան մարդիկ, ովքեր անբարյացակամ են ձեր նկատմամբ և թաքցնում են իրենց վերաբերմունքը: Ճանաչեք նրանց, և դուք անսպասելիորեն մանևրելու տեղ կգտնեք: Դուք հնարավորություն կունենաք մի քայլ հետ կանգնել և սպասել, դիտել, իսկ անհրաժեշտության դեպքում ինչ-որ գործողություններ ձեռնարկել՝ հարձակվել կամ, ընդհակառակը, խուսափել հարձակումից ՝ վատագույնից խուսափելու համար: Դուք նույնիսկ կարող եք փորձել թշնամուն դարձնել ուղեկից: Բայց ինչ էլ որ ձեռնարկեք, դուք այլևս միամիտ զոհ չեք լինի, որը միայն հասցնում է նահանջել և խուսափել թշնամու մշտական հարձակման ներքո: Ուշադիր և մտածված վերաբերվեք զենքի ընտրությանը, միշտ պատրաստ պահեք այն, մի շտապեք այն ամբողջությամբ դնել պատյանը, նույնիսկ ընկերների հետ գործ ունենալիս:

Մարդիկ, որպես կանոն, հիանալի կարողանում են քողարկել իրենց թշնամանքը, բայց հաճախ, այնուամենայնիվ, ակամայից մատնում են իրենց: Սովորաբար դա տեղի է ունենում պատահական, մանրուքների շնորհիվ, որոնք բացահայտում են նրանց իրական մտադրությունները: Չինաստանի Կոմունիստական կուսակցության առաջնորդ Մաո Ցզեդունի ամենամոտ ընկերներից և համախոհներից մեկը Լին

Բիաոն էր՝ Քաղբյուրոյի անդամ և, ինչպես ենթադրվում էր, առաջնորդի հավանական իրավահաջորդը: 1960-ականների վերջին և 1970-ականների սկզբին Մաոն փոփոխություն նկատեց Լին Բիաոյի վարքագծում: Նա հանկարծ սկսեց արտահայտել իր սերն ու նվիրվածությունը փոքր-ինչ անհամաչափ, չափազանցված եռանդով: Մաոյին գովում էին բոլորը, բայց Լին Բիաոյի փառաբանություններն առանձնանում էին մյուսներից: Մաոյի համար այդպիսի դիտարկումը ազդանշան էր, որ ինչ-որ բան այն չէ: Նա սկսեց ավելի ուշադիր հետևել Բիաոյին և շուտով եկավ այն եզրակացության, որ զինակիցը դավաճանություն է ծրագրում՝ ցանկանալով գրավել իշխանությունը: Լին Բիաոն իսկապես դավադրություն էր պատրաստում նրա դեմ:

Խոսքը ոչ թե բարեկամության բոլոր արտահայտություններին չհավատալու, այլ դրանց վրա ուշադրություն դարձնելու մասին է: Ուշադրություն դարձրեք ձեր շրջապատի հուզականության ջերմաստիճանի փոփոխություններին՝ անսովոր շատախոսություններին, ձեր հետ հանկարծակի անկեղծանալու պոռթկմանը, ինչը նախկինում չէր եղել, երրորդ անձանց կողմից ձեր հասցեին չափազանց գովեստների հնչեցմանը, դաշինք կնքելու համառ առաջարկներին, որն ավելի շատ իմաստալից է մեկ այլ անձի համար, քան ձեզ համար: Վստահեք ձեր բնազդներին: Հիշեք, եթե ինչ-որ մեկի պահվածքը ձեզ կասկածելի է թվում, կասկածների համար հիմքը կարող է լինել իրական: Կարող է, իհարկե, պարզվել, որ դրա ետևում վատ բան չկա, ու փառք Աստծո, բայց ամեն դեպքում զգոնությունը չի խանգարի:

Դուք կարող եք վարվել տարբեր ձևերով. հանգստանալ և ուշադիր հետևել, թե ինչ է կատարվում, կարդալ նշանները կամ, ընդհակառակը, ակտիվորեն գործել՝ բացահայտելով ձեր թշնամիներին (ինչպես ասում են չինացիները թակելով խոտը վախեցնենք օձերին): Աստվածաշնչից գիտենք, որ Դավիթը կասկածում էր, որ իր սկեսրայրը՝ Սավուղ թագավորը պատրաստվում էր սպանել իրեն: Ինչպե՞ս կարող էր նա ստուգել այս ենթադրությունները: Դավիթն իր կասկածները հայտնեց Սավուղի որդի Հովնաթանին՝ իր ամենամոտ և հավատարիմ ընկերոջը: Հովնաթանը համոզված էր, որ հայրը նման բան չէր անի առանց իր՝ Հովնաթանի գիտության, ուստի Դավիթն առաջարկեց հետևյալը: Տոնակատարության կապակցությամբ Սավուղը պետք է այցելեր պալատ: Բայց նա այս անգամ որոշեց թաքնվել: Հովնաթանը պետք է ասեր, որ նա էր բաց թողել ընկերոջը չնչին, բայց անհետաձգելի գործով: Ինչպես Դավիթն էր կանխատեսում, որդու բացատրությունները բարկացրին Սավուղին, և նա բացականչեց. «հմա գնա և բեր նրան ինձ մոտ, որովհետև նա դատապարտված է մահվան»:

Դավիթի կազմակերպած ստուգումը հաջող էր, քանի որ տոնակատարությունը բաց թողնելու նրա արդարացմանը կարելի էր տալ երկակի բացատրություն: Եթե Սավուղի մտադրությունները փեսայի նկատմամբ բարի լինեին, նա առավելագույնը կկշտամբեր Դավիթին իր եսասիրության համար և դրանով էլ ամեն ինչ կավարտվեր: Սակայն, Սավուղը իսկապես ատում էր Դավիթին և, հետևաբար, նրա բացակայությունը համարեց մարտահրավեր, որպես արհամարհանքի դրսևորում, ինչը նրան ստիպեց կորցնել իր հանգստությունը:

Հետևեք Դավթի օրինակին. ասեք կամ արեք մի բան, որը կարող է տարբեր կերպ մեկնաբանվել և, որը բավականին քաղաքավարի կթվա, բայց կարող է հուշել թեթև սառնության մասին կամ նույնիսկ ընկալվել որպես վիրավորանք: Ընկերը կզարմանա, բայց մեծ նշանակություն չի տա: Գաղտնի թշնամին, ամենայն հավանականությամբ, կզայրանա: Զգացմունքների ցանկացած ալիք ձեզ թույլ կտա հասկանալ, թե ինչն է ալեկոծում մարմանդ հորձանուտի խորքը:

Հաճախ մարդկանց իրական դեմքը տեսնելու համար բավական է լարված իրավիճակ կամ վեճ հրահրել: Հոլիվուդյան պրոդյուսեր Հարի Կոնը՝ «Universal Pictures» ընկերության նախագահը, հաճախ էր օգտվում այս հնարքից՝ ցանկանալով պարզաբանել ստուդիայի այն աշխատակիցների դիրքորոշումը, ովքեր թաքցնում էին, թե ում կողմից են: Նա հանկարծ սկսում էր քննադատել նրանց աշխատանքը կամ ծայրահեղ դիրք էր զբաղեցնում քննարկումներում, որը հաճախ վիրավորական էր ստուգվողների համար: Զայրացած ռեժիսորներն ու սցենարիստները կորցնում էին սովորական ինքնատիրապետումը և ջերմեռանդորեն ցուցադրում էին իրենց իրական վերաբերմունքը:

Կարևոր է հասկանալ, որ մարդիկ ձգտում են զսպվածության և գաղտնիության, քանի որ նման դիրքորոշումը շատ ավելի անվտանգ է, քան իրենց դիրքորոշման բացահայտ ցուցադրումը: Եթե Դուք ղեկավար եք, նրանք, ամենայն հավանականությամբ, ընդօրինակելու են ձեր տեսակետները: Սակայն, հաճախ նրանց համաձայնությունը պարզապես պարզ քաղաքավարություն է, ոչ ավելին, կամ նույնիսկ սովորական քծնանք: Ընդհանուր առմամբ, մարդիկ ավելի անկեղծ են, երբ վիճում են: Եթե դուք անկեղծորեն վեճի առիթ եք փնտրում, և մարդը շարունակում է աջակցել ձեր գաղափարներին, գուցե ձեր առջև քամելեոն է, հատկապես վտանգավոր տեսակ: Զգուշացեք նրանցից, ովքեր թաքնվում են անաչառության և անհասկանալի աբստրակցիաների ճակատի հետևում: Անաչառ մարդիկ չկան: Միտումնավոր մատնանշված հարցը, վիրավորող գնահատականը կստիպի նրանց արձագանքել և ընդունել կողմերից մեկին:

Որոշ դեպքերում ավելի լավ է նախընտրել ոչ այնքան պարզ մոտեցումը՝ պոտենցիալ թշնամիների հետ վարվել նույնքան նրբանկատ և խորամանկ, որքան նրանք վարվում են ձեզ հետ: 1519 թվականին Էրնան Կորտեսը իր ջոկատով՝ հինգ հարյուր արկածախնդիրներով, ժամանեց Մեքսիկա: Նրանց թվում էին նաև այնպիսիները, որոնց հավատարմությունը կասկածներ էր առաջացնում: Արշավի ընթացքում, եթե, նույնիսկ, ինչ-որ արարքներ Կորտեսին կասկածելի էին թվում, նա, ցույց չէր տալիս իր վերաբերմունքը և ուղիղ ու հանգիստ էր պահում իրեն: Ավելին, նա փորձում էր լեզու գտնել բոլորի հետ՝ ընդունելով և հաստատելով այն ամենը, ինչ արվում էր: Հավատալով, որ Կորտեսը թույլ է կամ ընդունում է նրանց կողմը, նրանք առավել ոգևորվեցին: Իսկ նա միայն դրան էր սպասում, որ այդ մարդիկ իրենց մատնեն: Այդ դեպքում և իր, և մյուսների համար պարզ կդառնար, որ իրենց առջև դավաճաններ են կանգնած: Հետո նա բոլոր հիմքերը կունենար նրանց բռնելու և պատժելու: Հաշվի առեք Կորտեսի մեթոդը: Եթե դուք անորոշ կասկածներ ունեք ձեր հանդեպ անբարյացակամ վերաբերմունքի կամ նույնիսկ ձեր ընկերների կամ կողմնակիցների թշնամանքի, կամ նրանց պահվածքը պարզապես տարօրինակ է թվում, մի տրամադրվեք միանգամից վիճելուն կամ զայրանալուն, փորձեք նույնիսկ ավելորդ հարցեր չտալ: Ավելի լավ է սպասել, ձևացնել, թե ոչինչ չեք նկատում: Եթե ձեր առջև իսկապես թշնամիներ են, ապա շուտով, դառնալով ավելի համարձակ, նրանք կբացահայտեն իրենց ծրագրած հաջորդ քայլը: Այդ ժամանակ նրանք կլինեն ձեր տեսադաշտում, և դուք կարող եք անցնել հարձակման:

Հաճախ թշնամին այնքան մասշտաբային է, որ բացահայտել նրան դժվար է: Դա կարող է լինել մի ամբողջ կազմակերպություն կամ մեկ անձ, բայց թաքնված, ճյուղավորված ցանցի հետևում: Այդ դեպքում պետք է թիրախվորել ամբողջության ինչ-որ մասի՝ առաջնորդի, կարծիք արտահայտողի, ինչ-որ շրջանակների գլխավոր ներկայացուցչի: Ահա թե ինչպես է եռանդուն ամերիկացի ակտիվիստ Սոլ Ալինսկին

վարվել կորպորացիաների և բյուրոկրատական կառույցների հետ: 1960-ականներին Չիկագոյում անցկացվող դպրոցական բարեփոխումների արշավում (անվճար դպրոցական ուսուցման միասնական համակարգի ստեղծում) նա կենտրոնացավ ուսումնական շրջանի կառավարչի վրա՝ քաջ գիտակցելով, որ այդ մարդը կփորձի պատասխանատվությունը բարդել ուրիշների վրա: Նա կառավարչին հարվածը հարվածի հետևից հասցրեց, մինչև գործը հրապարակայնացվեց՝ կտրելով նրա նահանջի ճանապարհները, ում կարող էր մեղադրել: Ի վերջո, նրանք, ովքեր կանգնած էին կառավարչի հետևում, ստիպված էին բացահայտել իրենց և օգնություն առաջարկել նրան: Ալինսկու նման, փորձեք չհարվածել դատարկությանը, մի պայքարեք վերացական թշնամու դեմ: Նման ճակատամարտում անհնար է թշնամուն հավասարակշռությունից հանել, և, հետևաբար, նա չի բացահայտվի և կմնա անտեսանելի ձեզ համար: Անհատականացրեք պայքարը, փորձեք տեսնել նրան, ում դեմ պետք է պայքարել:

Վտանգները թաքնված են ամենուր: Մեզանից յուրաքանչյուրն ունի չարախոսներ, ոչ ոք ապահովագրված չէ նաև ծանր, ապակառուցողական հարաբերություններից: Կործանարար գործընթացը հաղթահարելու, ընդհատելու միակ միջոցը ստեղծված իրավիճակին ուղիղ առերեսվելն է: Զսպել դժգոհությունն ու զայրույթը, խուսափել ձեզ սպառնացող մարդուց, համաձայնվել ամեն ինչի և բոլորի հետ՝ այս սովորական տեխնիկան անխուսափելիորեն հանգեցնելու է պարտության: Հակամարտությունից անընդհատ զերծ մնալը սովորություն կդառնա, և շուտով դուք կդադարեք զգալ, որ «մարտում զմայլանք կա»: Այստեղ մեղքի զգացումն առավել տարօրինակ է՝ դուք մեղավոր չեք, որ չարախոհներ ունեք: Նույնքան անօգուտ է այն զգացողությունը, որ ձեզ վիրավորել են կամ զոհ են դարձրել: Երկու դեպքում էլ դուք պարզապես մխիթարում եք ինքներդ ձեզ՝ կենտրոնանալով ձեր սեփական զգացմունքների և դժգոհությունների վրա: Տհաճ իրավիճակը ներքին փորձառությունների մակարդակին հասցնելու փոխարեն՝ պատճառը փնտրեք արտաքին հանգամանքներում, բացահայտեք թշնամուն և հանդիպեք նրան: Սա է միակ ելքը:

Հայտնի մանկական հոգեբան Ժան Պիաժեն կոնֆլիկտը դիտում էր որպես երեխայի մտավոր զարգացման կարևոր մաս: Հասակակիցների, իսկ ավելի ուշ ծնողների հետ բախումների շնորհիվ երեխաները հարմարվում են իրենց շրջապատող աշխարհին և սովորում են գտնել խնդիրների լուծման ուղիներ: Այն երեխաները, ովքեր ամեն գնով փորձում են խուսափել կոնֆլիկտներից, կամ նրանք, ում խնամում են չափազանց հոգատար ծնողները, դուրս են գալիս կյանքի ասպարեզ անպատրաստ, սոցիալապես և հոգեբանորեն ոչ ադեկվատ: Դա ճիշտ է նաև մեծահասակների համար: Շրջապատում փոխհրաձգությունների շնորհիվ է, որ մենք սովորում ենք, թե ինչն է արդյունավետ և ինչը չի գործում, սովորում ենք պաշտպանել ինքներս մեզ և պաշտպանել մեր տեսակետները: Պետք չէ վախենալ առ այն, որ կարող ենք թշնամիներ ձեռք բերել: Կոնֆլիկտը բուժական ազդեցություն ունի:

Թշնամիներ ունենալը շատ առավելություններ ունի: Օրինակ՝ դրանք ոգեշնչում են մեզ և ստիպում մեզ հստակ ձևակերպել, թե ինչին ենք հավատում: Նկարիչ Սալվադոր Դալին վաղ հասկացավ, որ կան բազմաթիվ որակներ, որոնք նա չի հանդուրժում ուրիշների մեջ՝ կոնֆորմիզմ, ռոմանտիկա, անփույթ բարեպաշտություն: Իր կյանքի ուղու յուրաքանչյուր փուլում նա գտնում էր մարդկանց, ովքեր, իր կարծիքով, ներկայացնում էին այդ հակահիդեալները, թշնամիներ, որոնց դեմ արժե պայքարել: Առաջինը բանաստեղծ Ֆեդերիկո Գարսիա Լորկան էր, ով գրում էր ռոմանտիկ բանաստեղծություններ: Հաջորդը Անդրե Բրետոնն էր՝ սյուրռեալիս-

տական շարժման առաջնորդը: Այդպիսի թշնամիների առկայությունը, որոնց դեմ նա ապստամբեց, ոգեշնչեց Դալիին, օգնեց նրան վստահություն ձեռք բերել:

Թշնամիները ձեզ տրամադրում են նաև հղման կետ՝ չափանիշ, որով դուք գնահատվում եք և՛ անձնական, և՛ սոցիալական առումով: Ճապոնացի սամուրայի քաջությունն ու արժանիքները չէր գնահատվում այնքան ժամանակ մինչև նա չէր մարտնչում լավագույն սուսերամարտիկի հետ: Որպեսզի Մուհամեդ Ալին լույս աշխարհ գար պահանջվեց Ջո Ֆրեյզերը: Ուժեղ հակառակորդը թույլ է տալիս, որ ձեր լավագույն որակները փայլեն: Եվ որքան ուժեղ է հակառակորդը, այնքան բարձր է քո վարկանիշը, նույնիսկ եթե դուք պարտվել եք: Ավելի լավ է պարտվել արժանավոր հակառակորդին, քան արատավորել անվնաս ու թույլին: Դուք հարգանք և համակրանք կվաստակեք՝ ամուր հիմքեր դնելով հաջորդ ճակատամարտի համար:

Եթե ձեզ վրա հարձակվում են, ապա դուք բավականաչափ նշանակալի եք թիրախ դառնալու համար: Ուրախացեք այս ուշադրությամբ և ինքներդ ձեզ ապացուցելու հնարավորությամբ: Մեզանից յուրաքանչյուրն ունի ագրեսիվության պոռթկումներ, և մենք ստիպված ենք լինում ճնշել դրանք: Թշնամին ելք է տալիս մեր բացասական էներգիային: Վերջապես, դուք ունեք մի առարկա, որի վրա կարող եք թափել ձեր ագրեսիվությունը ՝ առանց մեղավորություն զգալու:

Դարեր շարունակ առաջնորդներն ու տիրակալները կարևոր էին համարում, որ թշնամին պետք է հայտնվի դժվարին ժամանակներում, դա ժողովրդին կշեղի կյանքի դժվարությունների մասին մտածելուց: Օգտագործեք թշնամուն՝ ձեր բանակը համախմբելու համար: Թշնամու հանդեպ ատելության զգացումը կօգնի ավելի լավ պայքարել: Նույնիսկ չափազանցեք թշնամու և ձեր միջև եղած տարբերությունը, հստակ նշեք սահմանը: Քսենոֆոնը չփորձեց արդար լինել: Նա չէր խոսում այն մասին, որ պարսիկներն իրականում այդքան էլ վատը չեն, չէր նշում նրանց դերը մարդկության առաջընթացի մեջ: Ոչ, նա նրանց անվանում էր բարբարոսներ, հույների հակառակը: Նա խարանեց նրանց ուխտադրուժ դավաճանությամբ և նրանց երկիրը անվանեց չար ու աստվածների համար տհաճ: Ձեր նպատակը հաղթանակն է, այլ ոչ թե արդարությունն ու անաչառությունը: Նայեք պատերազմի ժամանակների հռետորաբանությանը, որը կօգնի ձեզ բարձրացնել խաղադրույքները և արթնացնել բարոյականությունը:

Բայց պատերազմում հատկապես անհրաժեշտ է մաններելու տարածք ունենալ: Պատին դեմ առնելը նշանակում է կործանում: Մի քանի թշնամիներ ձեռք բերելը ձեզ հաջողության շանսեր է տալիս: Դուք կարող եք խաբել նրանց մեկը մյուսին իրար դեմ հանելով ու կանգնելով մեկի կողքին՝ հարձակվելով մյուսի վրա և այլն: Առանց թշնամիների, դուք չեք կարողանա որոշել, թե ինչպես և որ ուղղությամբ մաններել, դուք ռիսկի եք դիմում կորցնել սահմանների զգացումը, թե որքան հեռու կարող եք գնալ: Գնեեյում Հուլիոս Կեսարը շատ վաղ ճանաչեց Պոմպեոսին որպես թշնամի: Գնահատելով նրա գործողությունները և ուշադիր հաշվարկելով իր քայլերը՝ նա արեց միայն այն, ինչը նրան օգնեց ամրապնդել իր դիրքերը Պոմպեոսի նկատմամբ: Երբ, ի վերջո, նրանց միջև իսկական պատերազմ սկսվեց, Կեսարը առավել շահավետ դիրքում էր: Բայց բավական էր, որ նա հաղթեր Պոմպեոսին և կհայտնվեր մի իրավիճակում, երբ նա այլևս այլ մրցակիցներ չէր ունենա, իսկ դա արդեն ամբողջությամբ փոխում էր հավասարակշռությունը: Պարզվում էր, որ Կեսարին պետք է արդեն մեծարեին այնպես ինչպես մեծարում էին աստվածություններին: Նրա հաղթանակը մրցակցի նկատմամբ հանգեցրեց իր սեփական մահվան: Թշնամիների շնորհիվ մենք ակամայից պահպանում ենք ողջախոհությունն ու չափավորությունը :

Հիշեք՝ շրջապատում միշտ կգտնվեն մարդիկ, ովքեր ավելի ագրեսիվ են, ավելի անկեղծ են, ավելի անողոք են, քան դուք, և վաղ թե ուշ նրանցից մեկը անխուսափելիորեն կհատնվի ձեր ճանապարհը: Դուք, իհարկե, կցանկանաք հարցը կարգավորել խաղաղությամբ և համաձայնության գալ նրանց հետ: Պատճառն այն է, որ այդպիսիք, որպես կանոն, հոյակապ խաբեբաներ են, ովքեր իրենց ռազմավարական նպատակներին հասնելու համար ունակ են հմայել ձեզ կամ պատրանք ստեղծել, որ դուք լիովին ազատ եք ձեր որոշումներում և գործողություններում: Իրականում, սակայն, նրանց պահանջներն անսահման են, նրանք պարզապես մտադրված են զինաթափել ձեզ: Երբեմն այնպիսի մրցակիցներ են հանդիպում, որ ձեզ հարկավոր է որոշակի կոփում որպեսզի հասկանաք, որ նրանց հետ ընդհանուր ոչինչ չունեք և համաձայնության հույս չկա: Մրցակցի համար փոխզիջման գնալու ձեր ցանկությունը զենք է ձեր դեմ պայքարում:

Այդպիսի հզոր թշնամիներին կարելի է ճանաչել իրենց անցյալով: Պարզեք, արդյոք մոտակա անցյալում եղել է իշխանության արագ բռնազավթում, բախտի հանկարծակի փայլատակում, արդյոք նախկինում նրանց դավաճանե՞լ են: Կասկածելով, որ գործ ունեք Նապոլեոնի հետ, զենքերը վայր մի դրեք և ձեր հոգսը մի դրեք ուրիշի վրա : Դուք ձեր սեփական պաշտպանության վերջին բնագիծն եք:

Հեղինակավոր կարծիք

Եթե դուք ապավինում եք անվտանգությանը և չեք մտածում սպառնալիքի մասին, եթե չունեք բավարար գիտելիքներ, որպեսզի թշնամուն դիմավորեք լիովին սպառազինված, ապա ձեզ կարելի է համեմատել վրանի վրա բույն հյուսած ճնճղուկի կամ կաթսայում լողացող ձկների հետ, որոնք չեն կարող ապրել մինչև օրվա ավարտը:

Ջուզե Լյան (181-234)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Միշտ տեղեկացված եղեք իրադարձություններին և վերահսկեք թշնամուն: Սա հետապնդման մոլուցք չէ, դուք պարզապես հստակություն եք ուզում: Կասկածը, որը շատ բռնակալներին ստիպեց յուրաքանչյուր մարդու մեջ թշնամի տեսնել, հանգեցրեց նրանց կործանմանը: Նրանք ամբողջովին կորցրել էին իրականության զգացումը՝ ներքաշվելով սեփական կասկածների պարանոյիկ[3] հորձանուտի մեջ: Դիտարկելով իրական, իսկական թշնամիներին, դուք փորձում եք չկորցնել ձեզ՝ պահպանելով զգուշությունն ու նախախնամությունը: Կասկածները պահեք ձեր մեջ, հետո եթե սխալվեք, ոչ ոք դրա մասին չի իմանա: Բացի այդ, առճակատում կազմակերպելիս աշխատեք մարդկանց չբաժանել այն աստիճանի, որ հետագայում նրանք անդառնալի լինեն: Մարգարեթ Թեթչերը, ով սովորաբար փայլում էր մարդկանց հակամարտող խմբավորումների բաժանելու արվեստում, ի վերջո կորցրեց իշխանությունը նրանց նկատմամբ: Նա ստեղծեց չափազանց շատ թշնամիներ, և խաղի ընթացքում չարաշահեց նույն տեխնիկան՝ օգտագործելով այն նույնիսկ այն իրավիճակներում, երբ անհրաժեշտ էր նահանջել: Ֆրանկլին Ռուզվելտը, այս խաղի մեկ այլ վարպետը, միշտ

---

[3] **Պարանոյա** (հուն.՝ παράνοια - խելագարություն), որի առավել էական ախտանիշը քրոնիկական զառանցանքն է: https://hy.wikipedia.org/wiki/Պարանոյա

փորձում էր հստակ տարբերակել իր թշնամիներին: Երբ սահմանը բավականին հստակ էր սահմանվում, նա հետ էր քաշվում, նահանջում էր, և դրանով նա ստեղծեց փափուկ քաղաքական գործչի համբավ, որը պատրաստ էր փոխզիջման և միայն ժամանակ առ ժամանակ էր դուրս գալիս պատերազմի արահետ: Եվ եթե նույնիսկ այս տպավորությունը կեղծ էր, պետք է խոստովանենք, որ ձեր մասին նման պատկերացում ստեղծելը իմաստության գագաթնակետն կլինի:

Աղբյուրը: Ռոբերտ Գրին «Պատերազմի 33 ռազմավարություն»